ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 11 » սեպտեմբեր 2024թ. No 4920 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/1772-24 առ 03.09.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի սեպտեմբերի « 11 » - ի  N4920 - Ա հրամանի

## ԳՀԱՅԱՍՏԱՆԻ  ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՂԵՐ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վիսքյու | բրոլուցիզումաբ | լուծույթ ներակնային ներարկման | 120մգ/մլ; ապակե սրվակ և ֆիլտրով ասեղ | Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա-երկրորդային փաթեթավորող, բաց թողնման հսկող, Նովարտիս Ֆարմա Շտեյն ԱԳ, Շաֆհաուզերշտրասե, 4332, Շվեյցարիա- բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի հսկող | Սլովենիա | Նովարտիս Օվերսիս Ինվեստմենտս ԱԳ, Լիխտշտրասե 35, 4056 Բազել | Շվեյցարիա | Դ | 22251 02.09.2024 |
| 2 | Հեմաստադ-ՌՆ | տրանեքսամաթթու | թաղանթապատ դեղահատեր | 250մգ; (30/3x10/) բլիստերում | Ռուբիկոն ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ- բալք արտադրող, փաթեթավորող, բաց թողնման հսկող, «Ռուբիկոն» ՍՊԸ, 62-2, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ, Բելառուսի Հանրապետություն- որակի հսկող | Բելառուսի Հանրապետություն | «Ռուբիկոն» ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ | Բելառուսի Հանրապետություն | Դ | 22252 02.09.2024 |
| 3 | Հեմաստադ-ՌՆ | տրանեքսամաթթու | թաղանթապատ դեղահատեր | 500մգ; (10/1x10/) բլիստերում | Ռուբիկոն ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ- բալք արտադրող, փաթեթավորող, բաց թողնման հսկող, «Ռուբիկոն» ՍՊԸ, 62-2, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ, Բելառուսի Հանրապետություն- որակի հսկող | Բելառուսի Հանրապետություն | «Ռուբիկոն» ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., 210002, Վիտեբսկ | Բելառուսի Հանրապետություն | Դ | 22253 02.09.2024 |